

Հայաստան երկիր այդ ձեր անզգամ խուժանին ոտնակոխ չէր լիներ; եւ այդ ողորմելի աւերակաց կերպարանքը չէր ունենար: Դժբախտութիւն մ'է, որ մեր իշխանք յիմարաբար ձեր գիրկը դիմեն կուրօրէն, երբ նոցայ ուսը կը շոյէք կեղծաւորաբար, բայց հոս այս լեռներուն մէջ պետք է լաւ գիտենա Բուղայ, որ ոչ իշխան կայ, ոչ նախարար, ոչ ազնուական, ոչ ազատ, բայց եւ ոչ մի ծառայ եւ մի գերի. ուստի խաբուելու մարդ ամենեւին չի կայ եւ մեռնելու պատրաստ ամէն ոք: Մենք այն ատեն միայն գէնքերը կը թողունք, երբ տեսնենք մեր երկիրն ազատ ձեր սիրելի ներկայութենէն. իսկ ձեր խոստումները Կաշմերու, Աբդլաներու խոստմունք են որոց չենք կրնար հաւատ ընծայել: Միայն մէկ սխալ ըրեր են մեր տղայք, որ քու աչքերդ կապեր եւ այնպէս բերեր են իմ քովս. ո՛չ այդպէս, ես քեզի ցոյց կը տամ թէ ինչպէ՛ս կրնաք ելնել մեր լեռները եւ մեզի հասնիր որպէսզի դիւրանայ Բուղայի քաշութիւնը եւ ամիրապետին վրեժխնդրութիւնը»:

Եւ այս խօսքերը զրուցելով ելաւ եւ առաւ պատգամաւորը աչքերը բաց հանեց սարն ի վեր այնպիսի ահաւոր բարձրութիւն մը, ուսկից կ'երեւար պատսպարանը կանանց եւ տղայոց անելանելի բարձրութեան մէջ, կը տանէր՝ ցոյց կ'ուտար իրեն ժայռերու ահագին բեկորներ բարձրաւանդակներու վրայ դիզուած, ուսկից տղու մը ձեռք կրնար դիւրութեամբ վեր ելնող զօրաց բազմութիւն ոչնչացնել, վերջապէս կը ցցնէր այն ամէն ամրութիւնքը, որ ամիսներով Սասնոյ ժողովուրդը պատրաստել էր իւր անառիկ լեռները անմատոյց ընելու համար թշնամեաց, եւ երբ այս ամէն բան ցցուց Յովնան պատգամաւորին, «Հիմա գնա՛, մեզմէ բարեւ զրուցե՛ տիրոջդ», ըսաւ եւ ճամփեց:

Երբ պատգամաւորը պատմեց Բուղայի թէ ի՞նչ ընդունելութիւն գտաւ Յովնանէ, դիմակը վար առաւ եւ աղբաները կրճտելով կատաղութեամբ հրամայեց անզգամութիւնն աւելցնել եւ խեղճ ու թշուառ բնակիչք, որ միամտաբար իրենց հնազանդութեան վրայ վստահացեալ մնացեր էին սրոյ ճարակ՝ կամ գերութեան շղթայներու